ՄԻԳՐԱՑԻԱՆ ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՆԱՐԵԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Միգրացիան ՀՀ սոցիալական անվտանգության համակարգի վրա ազդող գործոններից է: Միգրացիայի ու մարդկային ռեսուրսների փոխառնչությունների տեսական և գործնական հիմնահարցերի վերհանումը, պարզաբանումը և վերլուծությունը Հայաստանի սոցիալական անվտանգության դիսկուրսում կարևոր և առանցքային նշանակություն ունեն: Իսկ ի՞նչ է ՀՀ սոցիալական անվտանգության համակարգը: Այն ազգային անվտանգության համակարգի ենթահամակա՞րգ է, թե՞ մեկ այլ բան: Սոցիալական անվտանգության համակարգը կարելի է բնութագրել որպես գործիքների և մեխանիզմների ամբողջություն, որը միտված է անձի, ընտանիքի, հասարակության և պետության բնականոն կենսագործունեությանը և նյութական պահանջմունքների բավարարման ապահովմանը: Սոցիալական անվտանգությունը ենթադրում է նշված սոցիալական միավորների՝ կենսական կարևոր շահերի պաշտպանվածություն արտաքին և ներքին վտանգներից: Ինչպես նշված է ՀՀ կառավարության համապատասխան որոշման հավելվածում, սոցիալական անվտանգությունը որոշվում է սոցիալական բախման հավանականությամբ, որը կարող է վտանգել հանրապետության տնտեսական, ազգային-էթնիկական և քաղաքական կայունությունը: Ընդ որում, ինչպիսի գործոններով էլ պայմանավորված լինի անկայունությունը պետության ներսում, վերջին հաշվով այն դառնում է սոցիալական: Ժողովրդագրական իրավիճակի բարելավման, աշխատանքի անվտանգության, աշխատավարձի կազմակերպման և զբաղվածության կանոնակարգման, ինչպես նաև բնակչության կենսաթոշակային ապահովության և սոցիալական աջակցության կայուն համակարգերի ձևավորման ուղղությամբ իրականացվող միջոցառումները ՀՀ սոցիալական անվտանգության համակարգի հիմնական բաղադրիչներ են[1]:

Ժամանակակից շուկայական տնտեսությամբ զարգացած երկրներում առաջին պլան են մղվում բնակչության սոցիալական անվտանգության կարիքների բավարարումը, հասարակության առաջընթացը և տնտեսական զարգացումը, որոնք պայմանավորված են ոչ միայն նյութական բարիքներով, այլև մարդկային կապիտալի բազմակողմանի

[1] Տե՛ս ՀՀ կառավարության 15.04.2010 թ. № 452-Ն որոշման հավելված, էջ 1:

զարգացման մակարդակով[2]: Տնտեսական աճի կարևորագույն աղբյուրներից բնական կապիտալի կողքին իր ուրույն տեղն է զբաղեցնում նաև մարդկային կապիտալը: Այս իրողությունը կարևոր է հատկապես բնական պաշարներով ոչ հարուստ փոքր երկրների համար: Այս տեսանկյունից կարելի է պնդել, որ մարդկային կապիտալի արժևորումը պետք է դառնա Հայաստանի գլխավոր գերակայությունը, առանց որի դժվար է պատկերացնել դրական տեղաշարժը տնտեսության զարգացման, ազգային անվտանգության պահպանման և պաշտպանունակության բարձրացման գործում:

Այսպես, ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում նշված է, որ սոցիալական պաշտպանությունը ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից է: Սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակը պետության կողմից երկրի բնակչության որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ որոշակի կարիքներ հոգալու հնարավորությունների ընդլայնումն է: Այն իրականացնում է սոցիալական աջակցության, սոցիալական ապահովության ու ապահովագրության խիստ որոշակի նպատակային քաղաքականություն՝ ուղղված երկրում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը[3]: Ժողովրդագրական իրավիճակի վրա հսկայական ազդեցություն ունի միգրացիայի գործոնը:

21-րդ դարում միգրացիայի և ժողովրդագրության ոլորտում յուրաքանչյուր երկիր ընտրում է քաղաքականություն մշակելու և իրականացնելու սեփական մոդելը: Այսպես, կան երկրներ, որոնք, կայուն զարգացման նպատակահարմարությունից և անվտանգության շահերից ելնելով, «զսպիչ» քաղաքականություն են իրականացնում՝ խրախուսելով բնակչության ծնելիության ցածր տեմպը (Չինաստան, Հնդկաստան): Զարգացած տնտեսական համակարգ ունեցող երկրներն իրենց հերթին, ժողովրդագրական, տնտեսական, սոցիալական, մշակութային ու պետական անվտանգության սպառնալիքներից ելնելով, պայքարում են արտաքին միգրացիոն հոսքերի դեմ (Ֆրանսիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա): Եվ վերջապես, զարգացող մի շարք երկրներ իրականացնում են բնակչության ծնելիությունը խթանող քաղաքականություն և պայքարում են արտագաղթի բոլոր տեսակների դեմ (Հայաստան, Ռուսաստան, Ուկրաինա):

Հայաստանյան իրականությունն ունի իր առանձնահատկությունները: Հայ բնակչության քանակական և որակական աճի նշանակությունը ոչ միայն ժողովրդագրական բնույթի հիմնահարց է, այլ նաև ան-

---

[2] Տե՛ս **Ahmad, S**. & **Schroeder, R.G.** The impact of human resource management practices on operational performance: recognizing country and industry differences. Journal of Operations Management, 2003, Vol. 21, № 1, էջ 19, **Asad Rehman, Shamas Ul deen** & **Sadaf Farooq**, Social Capital and Human Resources Development: A Knowledge, Attitudes and Practices (KAP) Analysis, International Journal of Innovation and Scientific Research, 2014, Vol 12, № 1, էջ 202-204:

[3] Տե՛ս ՀՀ կառավարության 27.03.2014 թ. № 442-Ն որոշման հավելվածը, էջ 116:

վտանգության՝ պայմանավորված ժողովրդագրական աճի բարձր տեմպեր ունեցող և Հայաստանի նկատմամբ ագրեսիվ տրամադրված մահմեդական երկրներով (Թուրքիա, Ադրբեջան) շրջապատված լինելու հանգամանքով: Ըստ այդմ՝ արդյունավետ ժողովրդագրական քաղաքականություն իրականացնելը ժամանակի հրամայականն է Հայաստանի համար: Ամենատարբեր փաստաթղթերով հռչակվել է, որ պետությունն այստեղ միտված է իրականացնելու բնակչության ծնելիության մակարդակը բարձրացնող քաղաքականություն[4]: Այդուհանդերձ պետք է փաստել, որ այդ ոլորտում առ այսօր ձեռնարկված միջոցառումներն իրավիճակը նկատելի չափով չեն բարելավել, այսինքն՝ ժողովրդագրական խնդիրների լուծմանն ուղղված որոշումների և դրանց իրագործման ավանդական մեթոդների արդյունավետությունը բարձր չէ: Խնդիրը հիմնականում այն է, որ երկրում առայժմ չեն գտնվել արտագաղթը զսպող և բնակչության ծնելիությունը խթանող արդյունավետ մեխանիզմներ:

Քաղաքագիտության տեսաբանների և վերլուծաբանների՝ միգրացիայի վերաբերյալ հետազոտություններն ակտիվացան հատկապես ԽՍՀՄ փլուզումից հետո՝ արևելքից դեպի արևմուտք միգրացիոն տեղաշարժերի ակտիվացմամբ պայմանավորված, իսկ անվտանգային հետազոտություններում միգրացիան տեղ գտավ առավելապես 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո[5]: Դրանից հետո արևմտյան մի շարք երկրներում միգրացիան սկսեց նույնացվել անվտանգության խնդիրների հետ, իսկ արևելյան երկրներում խնդիրն այդ տեսանկյունից դեռևս չի դիտարկվում: Պատճառն այն է, որ արևելյան երկրները հիմնականում միգրացիոն հոսքերի դոնորներ են, իսկ արևմտյան երկրները՝ այդ հոսքերն ընդունող: Վերջիններս բախվում են միանգամից մի քանի խնդիրների, որոնցից կարևորագույնը թերևս եկած նոր խմբերի ինտեգրումն է տեղի հասարակություններին[6]: Այդ նոր խմբերը հաճախ խուսափում են սովորել ընդունող երկրի լեզուն, հետևաբար չեն ինտեգրվում հասարակության լայն շերտերին, չեն աշխատում՝ դառնալով տարատեսակ հանցագործությունների մասնակից, այսինքն՝ դառնում են անվտանգության սպառնալիք ընդունող երկրի համար[7]: Հետաքրքրական է, որ միգրացիան սոցիալական անվտանգության համատեքստում առավելապես ուսումնասիրված է արևմտյան երկրների հեղինակների կողմից, և դա տրամաբանական է. այս պահին

---

[4] Տե՛ս ՀՀ կառավարության 15.04.2010 թ. № 452-Ն, 12.01.2017 թ. № 122-Ն, 30.12.2010 թ. № 51-Ն որոշումները:

[5] Տե՛ս http://www.huffingtonpost.com/entry/us-immigration-since-911_us_57d05479e4b0a48094a71bc0

[6] Տե՛ս **Michela Ceccorulli**, Migration as a security threat: internal and external dynamics in the European Union, GARNET Working Paper № 65/09, 2009, էջ 6-8 / http://www2.warwick.ac.uk/fac/soc/pais/research/researchcentres/csgr/garnet/workingpapers/6509.pdf

[7] Տե՛ս **Julia Tallmeister**, Is Immigration a Threat to Security? 2013 / http://www.e-ir.info/2013/08/24/is-immigration-a-threat-to-security/

նրանց համար միգրացիան անվտանգության լուրջ սպառնալիք է, հետևաբար գիտավերլուծական շրջանակներին տրամադրվում են միջոցներ՝ նման ուսումնասիրություններ կատարելու նպատակով: Մյուս կողմից՝ միգրացիան անվտանգության համատեքստում բավականին քիչ է ուսումնասիրված էմիգրացիոն երկրներում, ինչը բնորոշ է նաև Հայաստանին:

Ստորև բերված աղյուսակ 1-ում ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ միայն վերջին յոթ տարիներին Հայաստանից ուղևորահոսքերի բացասական սալդոն (մեկնողների թվի գերազանցումը ժամանողների թվին) տարեկան միջին հաշվով կազմում է շուրջ 42500 մարդ[8]:

Աղյուսակ 1

ՀՀ սահմանահատումների հարաբերակցությունը 2010-2016 թթ.

Տարեթիվը	Ժամանում	Մեկնում	Սալդո	Ուղևորահոսքերի ընդհանուր ծավալը
	հազար մարդ			
2010	1754,2	1800,9	-46,7	3555,1
2011	1945,1	1988,9	-43,8	3934,1
2012	2191,8	2234,6	-42,8	4426,4
2013	2476,3	2507,5	-31,2	4983,8
2014	2734,6	2776,3	-41,7	5510,9
2015	2709,3	2752,7	-43,4	5462,0
2016	2867,0	2915,2	-48,2	5782,2

Բնակչության զանգվածային արտագաղթը Հայաստանում սկիզբ է առել անկախություն ձեռք բերելուց անմիջապես հետո: Տարբեր հաշվարկներով՝ 1991-2017 թթ. Հայաստանից արտագաղթած բնակչության թիվը հասնում է շուրջ մեկ միլիոնի, իսկ ՀՀ ԱՎԾ տվյալների համաձայն՝ այդ տարիներին մեկնել և չի վերադարձել մոտավորապես 700 հազար մարդ: Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2017 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմել է 2 մլն 986 հազ. 500 մարդ, որից 1 մլն 901 հազ. 700-ը կազմում է քաղաքային բնակչութ-

[8] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Սահմանահատումների դինամիկան» / http://www.smsmta.am/?menu_id=18: Պայմանականորեն ելակետ ենք ընտրել 2010 թ.՝ հաշվի առնելով 2009 թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամով պայմանավորված միգրացիոն հոսքերի ակտիվացումը:

յունը, իսկ 1 մլն 84 հազ. 800-ը՝ գյուղական, մինչդեռ 1992 թ. Հայաստանի մշտական բնակչության թիվը կազմել է 3 մլն 600[9]: Պետք է նշել, որ ԵԱՏՄ անդամ երկրներից միայն Հայաստանն է, որ վերջին հինգ տարիներին գրանցել է մշտական բնակչության քանակի նվազում[10]:

Աղյուսակ 2

ԱՊՀ երկրների մշտական բնակչության թվաքանակի փոփոխությունները 2012-2016 թթ.

Երկիր	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	2016 թ.
	մլն. մարդ				
Հայաստան	3.0	3.0	3.0	3.0	2.99
Ադրբեջան	9.3	9.4	9.5	9.7	9.8
Բելառուս	9.5	9.5	9.5	9.5	9.5
Թուրքմենստան	5.1	5.2	5.2	5.3	5.4
Ղազախստան	16.6	16.8	17.0	17.3	17.5
Ղրղզստան	5.6	5.7	5.7	5.8	6.0
Մոլդովա	4.1	4.1	4.1	4.1	4.1
Ռուսաստան	142.8	143.2	143.5	143.7	144.3
Տաջիկստան	7.7	7.9	8.1	8.3	8.5
Ուզբեկստան	28.5	29.8	30.2	30.7	31.3
Ուկրաինա	45.7	45.6	45.5	42.9	42.8

Աղյուսակ 2-ի տվյալներից պարզ է դառնում, որ Ադրբեջանը ոչ միայն բնական աճի, այլ նաև ներգաղթի շնորհիվ 2012-2016 թթ. ընթացքում շուրջ կես միլիոն աճ է ունեցել:

Աղյուսակ 2-ում նշված տվյալները, իհարկե, մտահոգիչ են, սակայն «Գլոբալ փոխակերպումներ. քաղաքականություն, տնտեսություն և մշակույթ» գրքում հեղինակները պնդում են, որ աշխարհում գոյություն չունի որևէ երկիր, որը կարողացել է խուսափել աշխատուժի ներհոսքից կամ արտահոսքից[11], իսկ Հայաստանի ներկայիս սոցիալական և ռազմաքաղաքական անվտանգության համատեքստում միգրացիայի այս ցուցանիշները հուսադրող չեն: Բնակչության արտահոսքով պայմանավորված՝ նվազել են նաև աշխատանքային ռեսուրսները, ինչը սոցիալական անվտանգության սպառնալիքներ է ձևավորում:

---

[9] Տե՛ս ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգ / http://www.smsmta.am/?id=948, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության՝ «Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2017 թ. հունվարի 1-ի դրությամբ» տարեկան տեղեկագիրը, Եր., 2017, էջ 3:

[10] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» 2017, էջ 558-559 / http://www.armstat.am/file/doc/99504478.pdf: Աղյուսակ 1-ի և աղյուսակ 2-ի տվյալները ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքից են վերցված:

[11] Տե՛ս **David Held, Anthony McGrew, David Goldblatt** & **Jonathon Perraton,** Global Transformations: Politics, Economics and Culture, Standford University Press, 1999, էջ 297:

Արցախի չլուծված հիմնախնդիրը, սահմանի երկայնքով հրադադարի հաճախակի խախտման հետևանքով զոհերի իրողությունը, 2016 թ. ապրիլյան պատերազմից հետո լայնածավալ ռազմական գործողությունների հնարավոր վերսկսման հեռանկարը, սպառազինության մրցավազքը, ինչպես նաև Ադրբեջանի՝ ՀՀ պետական բյուջեն գերազանցող ռազմական ծախսերը, սահմանակից թուրքական երկու երկրների կողմից տնտեսական շրջափակումը, Թուրքիայի հետ փակ սահմանն ակնհայտորեն նվազեցնում են Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները՝ աշխատուժի արտահանումը դարձնելով աշխատանքային ներքին շուկայի ծանրաբեռնվածությունը մեղմելու և օտարերկրյա տրանսֆերտներ ներգրավելու գլխավոր միջոցներից մեկը:

Վերջին տարիներին ռուսական ռուբլու գնանկումը և համաշխարհային շուկայում հանքահումքային ապրանքների գների էժանացումն էլ ավելի նկատելի են դարձրել ոչ դրական գործոնների ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա[12]: Ուստի ապագայի նկատմամբ հայկական տիրույթում ձևավորվում են բացասական միտումներ, որոնք հղի են միգրացիոն նոր հոսքերի ակտիվացման և նոր «շուկաների» որոնման սպառնալիքով: Այսինքն՝ հայ միգրանտները, Ռուսաստանից բացի, սկսել են որոնել այլ տարբերակներ ևս, մասնավորապես՝ Կանադա, ԱՄՆ և Արևմտյան Եվրոպա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշվածներից ոչ մեկի հետ Հայաստանը չունի ազատ վիզային ռեժիմ, ենթադրելի է, որ մեկնող խմբերի մեծ մասը անօրինական միգրացիայի միջոցով է փորձելու հաստատվել ընդունող երկրում, իսկ դա նշանակում է, որ նրանց Հայաստան վերադառնալու հնարավորությունը հասնում է նվազագույնի: Այս պարագայում խոսքը ոչ ցիկլային միգրացիայի մասին է: Արդյունքում՝ Հայաստանը՝ որպես ինքնուրույն պետական միավոր, կանգնում է բարդ ընտրության առջև: Փաստորեն, Հայաստանը կա՛մ պետք է արմատական, համակարգային և իրական բարեփոխումներ ձեռնարկի՝ լուրջ բարելավումներ կատարելով հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում՝ արդարացնելու մարդկանց սպասումները, փոխելու տրամադրություն-

[12] ԱՄՆ և ԵՄ կողմից տնտեսական պատժամիջոցներ կիրառելու հետևանքով ոչ բարենպաստ իրավիճակում է հայտնվել ՌԴ տնտեսությունը, իսկ վերջինս ՀՀ կարևորագույն առևտրատնտեսական գործընկերն է, հիմնական դրամական փոխանցումները կատարվում են ռուսական ռուբլով: Երկրորդ խնդիրը վերաբերում է համաշխարհային շուկայում հումքային ապրանքների գների նվազմանը: Հայաստանը հումք արտահանող երկիր է, արտահանման շուրջ 50 %-ը հանքահումքային ապրանքներն են, և նույն ծավալի հումք արտահանելու դեպքում ավելի քիչ արտարժույթ է մտել ՀՀ տնտեսություն: Արդյունքում՝ միայն տրանսֆերտները երկու տարիների ընթացքում՝ 2014-2015 թթ. կրճատվել են շուրջ 700 մլն դոլարով (տե՛ս ՀՀ ֆինանսների նախարար **Վարդան Արամյանի** հայտարարությունը, 4 հոկտեմբեր, 2016 թ. / http://www.panorama.am/am/news/2016/10/04/%D5%8E%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%B6%D4%B1%D6%80%D5%A1%D5%B4%D5%B5%D5%A1%D5%B6/1653710)

ներն ու մտածելակերպը, կա՛մ կարող է սահմանափակվել անպտուղ հայտարարություններով և նորմատիվ-իրավական ակտերի ընդունմամբ, որոնք այդպես էլ կյանքի չեն կոչվում: Այս առումով հատկանշական է այն հանգամանքը, որ 2016 թ. սեպտեմբերին Հայաստանում ձևավորված նոր կառավարությունն[13] իր գործունեության առաջին օրերից վերը նշված տարբերակներից առաջինն ընտրելու հրապարակային հայտարարություններ է արել: Հետևաբար գիտավերլուծական և փորձագիտական շրջանակների կողմից Հայաստանի անվտանգային դինամիկայի առավել արդիական՝ միգրացիայի հիմնախնդիրը քննարկելիս պետք է առաջնորդվել ոչ թե քաղաքական, այլ գիտականորեն հիմնավորված, գիտափորձական քննություն անցած լուծումներով:

Հատկանշական է, որ եթե Հայաստանում արտագաղթի սոցիալ-տնտեսական պատճառները տեսանելի են, ապա դրա անվտանգային հետևանքները բավարար մակարդակով գնահատված չեն: Կարելի է առանձնացնել արտագաղթի հիմնական դրդապատճառների մի ամբողջական խումբ՝ աշխատանքի հետ առնչություն ունեցող հանգամանքները՝ աշխատատեղերի բացակայությունը (նաև մասնագիտական) կամ սղությունը, աշխատանքի վարձատրության ցածր մակարդակը և տնտեսական ինքնուրույն գործունեությամբ զբաղվելու բարդությունները: Արտագաղթի հետևանքները կարող ենք պայմանականորեն բաժանել երկու խմբի՝ դրական և բացասական: Արտերկրի հայ աշխատուժի դրամական փոխանցումները, իհարկե, աշխատանքային միգրացիայի առաջնային դրական ազդակներն են: Անշուշտ բացասական հետևանքները չեն կարող ունենալ այդ դրամական փոխանցումների համարժեքը: Հայաստանի համար մարդկային ռեսուրսի պահպանումն ունի ռազմավարական առաջնային նշանակություն: Այս պնդման վերջին ամենաթարմ ապացույցը կարելի է համարել 2016 թ. ապրիլյան պատերազմը, որը ցույց տվեց, որ ՀՀ ՊՆ զինված ուժերն ու Արցախի Հանրապետության պաշտպանության բանակը հայկական երկու պետությունների անվտանգության ապահովման գլխավոր երաշխիքներն են: Ավելին, ըստ Վիգեն Սարգսյանի՝ տարածաշրջանում այսօր տեղի ունեցող իրադարձությունները և հայկական երկու պետությունների առջև ծառացած ռազմական սպառնալիքները թույլ են տալիս կանխատեսել, որ առաջիկայում Հայաստանի անվտանգային միջավայրը և զինված ուժերի առջև դրված խնդիրները էական փոփոխություններ չեն կրի[14]: Հետևաբար, բանակը Հայաստանում շարունակում է մնալ մարդկային ռեսուրսների «սպառման» առաջնահերթ կա-

[13] Տե՛ս ՀՀ կառավարության ծրագրի նախագիծ, ՀՀ կառավարության որոշման № 1060 հավելված, Եր., 2016 / https://www.e-gov.am/sessions/archive/2016/10/18/

[14] Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը ՀՀ ազգային ժողովում, 20 հոկտեմբեր, 2016 թ. / https://www.armenpress.am/arm/news/864687/pashtpanakan-hamakargi-himqum-drvel-e-azg-banak-gaxapary.html

րիքն ունեցողների թվում: Դա է ստիպում պնդելու, որ Հայաստանում հարկավոր է հիմնովին վերանայել և վերագնահատել միգրացիոն քաղաքականությունը ոչ միայն բուն պաշտպանական ոլորտի համատեքստում: Մասնավորապես, հայաստանյան իրականության համար կարևոր է գիտակցել նաև, որ գիտության թիրախավորված ճյուղերի զարգացումը և դրանց արդյունքների գործնականում կիրառումը ևս Հայաստանի անվտանգային դիսկուրսի կարևոր բաղադրիչ են, քանզի հակառակ պարագայում կրկին բախվում ենք միգրացիայի հիմնախնդրին: Այսպես, եթե բնակչության թվաքանակով և տարածքով փոքր պետությունը ցանկանում է երիտասարդ մասնագետների քանակական և որակական աճ ապահովել գիտության բնագավառում, ապա պետք է ուժեղացնի ավագ դպրոցների դերը՝ մասնավորապես դրանցում ընդգծելով մաթեմատիկայի և բնական գիտությունների առաջնայնությունը[15]: Դա նշանակում է, որ եթե երկիրն իր երկարաժամկետ զարգացման ռազմավարական ծրագրով ընտրել է տնտեսության ինչոր գերակա ճյուղեր, կրթության համակարգը պետք է մատակարարի տվյալ պահանջներին համապատասխանող մասնագիտական կադրեր: Կրթությունը չպետք է լինի տնտեսության պահանջներից անկախ գործող համակարգ: Հակառակ դեպքում՝ ապագային միտված ծրագրերն իրագործող չի լինի, քանի որ երիտասարդներն աստիճանաբար կհեռանան երկրից՝ ինքնաիրացման որոնումներից դրդված, իսկ Հայաստանը չի կարող իրեն թույլ տալ երիտասարդ և որակյալ աշխատուժի արտահոսքի շռայլություն: Խնդիրն այն է, որ առաջին հերթին պետք է խուսափել երիտասարդ պրոֆեսիոնալ կադրերի կորստից, որոնք կարող էին երկրի համար նյութական արժեքներ ստեղծել, բայց, իրենց ընդունակությունների իրացման հնարավորություն չգտնելով, հեռանում են՝ ընդունող երկրում կայանալու համար:

Չնայած այն հանգամանքին, որ միգրացիոն գործընթացները կարգավորելու համար Հայաստանում ստեղծվել է պետական լիազոր մարմին, և կառավարության կողմից ոլորտը կարգավորելու համար ընդունվել են համապատասխան հայեցակարգ և գործողությունների ծրագիր[16], այնուամենայնիվ միգրացիայի արդյունավետ քաղաքակա-

---

[15] Տե՛ս **Eli Ginzberg, Edward A. Fitzpatrick, Howard A. Meyerhoff and Eugene M.Kulischer**, Human Resources and National Security, 2014, Vol. 82, № 3, էջ 124:

[16] ՀՀ 1991 թ. անկախությունից հետո ինստիտուցիոնալ մակարդակով ստեղծվեց միգրացիոն քաղաքականություն մշակելու և իրականացնելու իրավասություններ ունեցող պետական կառավարման մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր փախստականների և միգրացիայի վարչությունը, որը 2005 թ. վերակազմավորվեց Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության (այժմ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն) կառուցվածքում գործող գործակալության (տե՛ս «ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգ» (ՀՀ կառավարության 2010 թ. դեկտեմբերի 30-ի № 51 որոշում), http://www.smsmta.am/?id=948, ՀՀ միգրացիայի պետական կարգավորման

նություն իրականացնելու ճանապարհին երկիրը բախվում է մի շարք մարտահրավերների: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արդի փուլում անհրաժեշտ է մշակել և իրականացնել երկրի ներքին և արտաքին միգրացիայի իրողություններն արտացոլող, ազգային շահերից բխող և երկրի ստանձնած պարտավորություններին համահունչ միգրացիայի կարգավորման հավասարակշռված քաղաքականություն[17]: Ավելին, առանձին ոլորտներում պետական քաղաքականությունը, ազգային և ճյուղային ռազմավարական ծրագրերը մշտապես պետք է արտացոլեն միգրացիոն հիմնախնդիրներն ու այս ոլորտում քաղաքականության գերակայությունները: Անհրաժեշտ է նաև ստեղծել միգրացիայի քաղաքականության մշակման, դրա համակարգման ու միջգերատեսչական համագործակցության ապահովման և վերահսկողության իրականացման համար պատասխանատու մարմին, քանի որ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը միգրացիայի ոլորտում քաղաքականության ամբողջական և ընդհանրական մանդատ չունի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը շարունակում է մնալ Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականության կարևոր խնդիրներից մեկը, ուստի հայկական կողմը ստիպված է անհրաժեշտ ռազմաքաղաքական քայլեր ձեռնարկել Ադրբեջանի հարձակողական քաղաքականությունից հայկական երկու պետությունների սահմանների երկայնքով անվտանգություն ապահովելու ուղղությամբ: Այս տեսանկյունից ուշադրության է արժանի «ազգ-բանակ» գաղափարը[18], որը ենթադրում է, որ կառավարման բոլոր մարմինները, քաղաքացիական, հասարակական ուժերը, ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի պետք է հստակ պատկերացնեն, թե ինչպես են հարաբերվում երկրի պաշտպանության գործին: Ըստ այդմ՝ ոչ միայն հասարակությունը մարդկային, նյութական ռեսուրսներով իր ներդրումը կունենա հայրենիքի պաշտպանության գործին, այլև բանակը կդառնա բանիմաց և հայրենասեր քաղաքացու դաստիարակության դպրոց[19]: «Ազգ-բանակ» գաղափարի իրագործման հա-

---

քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թթ. գործողությունների ծրագիր (ՀՀ կառավարության 2011 թ. նոյեմբերի 10-ի № 1593 որոշման հավելված) https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/ 2011/11/111593.pdf):

[17] Տե՛ս **Զոյա Թադևոսյան, Կարեն Հակոբյան, Դիանա Գալոյան, Լուսինե Աղաջանյան,** Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ, Եր., 2014, էջ 8-12, Եվրոպական կրթական հիմնադրամ, Միգրացիա և հմտություններ. Հայաստանի ազգային զեկույց, Թուրին, 2012, էջ 94-101, **Ալինա Պողոսյան**, ՌԴ միգրացիոն քաղաքականության փոփոխությունները և ՀՀ միգրացիոն քաղաքականության արձագանքը, Եր., 2015, էջ 27-30:

[18] Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը ՀՀ Ազգային ժողովում, 20 հոկտեմբեր, 2016 թ. https://www.armenpress.am/arm/news/864687/pashtpanakan-hamakargi-himqum-drvel-e-azg-banak-gaxapary.html

[19] Տե՛ս նույն տեղը:

մար անհրաժեշտ է, որ Հայաստանի քաղաքացին շարունակի ապրել, կրթվել, աշխատել ու ստեղծել Հայաստանում: Այսինքն՝ հնարավոր բոլոր միջոցներով Հայաստանը կարիք ունի նվազեցնելու արտագաղթի տեմպերը: Ավելին, միգրացիան պետք է ճանաչվի որպես ազգային անվտանգության և ռազմաքաղաքական բնույթի խնդիր: Միգրացիայի կարգավորման բազմաթիվ ու տարատեսակ խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է այս ոլորտում միասնական ու ամբողջական քաղաքականություն սահմանել ու այն իրականացնելու համար ամուր ինստիտուցիոնալ նախապայմաններ ստեղծել: Այսպես, հարկ է հստակեցնել միգրացիայի ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները, նպատակներն ու ակնկալվող արդյունքները, քաղաքականության իրականացման հիմնական միջոցներն ու ուղղությունները, ինչպես նաև ծրագրային միջոցառումներն ու դրանց մշտադիտարկման համակարգը: Սա ժամանակի հրամայականն է, և սրան այլընտրանք չկա: Միգրացիայի կարգավորման ակադեմիական բովանդակությունը վերաբերում է հենց ներգաղթի կարգավորմանը, սակայն Հայաստանի նման միգրացիոն մեծ հոսքեր ունեցող երկրի համար կարևորը միգրացիայի երկու բաղադրիչների հավասարակշռված համադրումն է միասնական պետական քաղաքականության շրջանակներում: Պարզ է, որ ներգաղթի կարգավորման պետական քաղաքականությունը չի կարող հակասել արտագաղթի կարգավորման քաղաքականությանը: Ավելին, դրանք պիտի համահունչ լինեն Սփյուռքի հետ գործակցության պետական քաղաքականությանը, իսկ որ ավելի կարևոր է՝ երկրի կայուն զարգացման գերակայություններին և անվտանգության ռազմավարության սկզբունքներին՝ որպես անկյունաքարեր: Իհարկե, միանգամայն ակնհայտ է, որ նշված միջոցառումներն իրականացնելը բավական բարդ խնդիր է, սակայն նաև անվիճելի է, որ միգրացիայի ոլորտում պետք է կարգավորել ոչ թե այն, ինչը հնարավոր է, այլ այն, ինչը հարկավոր է:

Միգրացիայի ոլորտում էական կարգավորումների իրականացումը չափազանց կենսական նշանակություն ունի Հայաստանի սոցիալական անվտանգությունն ապահովելու դինամիկայում: Արդի ժամանակաշրջանում այդ կարգավորումներն անհրաժեշտ են ձեռնարկել՝ զուգահեռաբար զարգացնելով տնտեսությունը՝ ի հաշիվ այնպիսի արդյունաբերական ճյուղերի, որոնք ավելի քիչ բնական ռեսուրսներ և ավելի շատ մարդկային տաղանդ են պահանջում:

Բանալի բառեր – *սոցիալական անվտանգություն, միգրացիոն քաղաքականություն, միգրացիոն կարգավորումներ, միգրացիոն գործընթացներ, մարդկային ռեսուրսներ, ՀՀ զինված ուժեր*

НАРЕК ГРИГОРЯН – ***Миграция в системе социальной безопасности РА***. – В условиях рыночной экономики изучение миграционной политики обусловлено

непосредственным воздействием миграции на общество и инфраструктуры. Сравнительные исследования негативных последствий миграции позволят оценить эффективность управления её тенденциями. Так что разработка и реализация эффективной миграционной политики является в армянском обществе жизненно важным фактором.

Ключевые слова: *социальная безопасность, миграционная политика, миграционные процессы, человеческие ресурсы, Вооружённые Силы*

NAREK GRIGORYAN – ***Migration in the Social Security System of RA***. – In the contemporary situation of market economy, the modernity of monitoring of Armenia's migration policy is due to the direct influence of migration processes on public life and infrastructures. The comparative studies of the negative consequences of migration allow assessment of efficient management trends. In this regard, the development and actualization of efficient migration policy are vital for Armenian society.

Key words: *social security, migration policy, migration settings, migration processes, human capital, armed forces of RA*